ՈՍԿԱՆ ԵՐԵՒԱՆՑՈՒ ՏՊԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ՄԱՐՍԵԼՈՒՄ

ԽԱՉԻԿ ՍԱՍՈՒԷԼԵԱՆ

Ցայտնի է, որ 1668 թ. հոկտեմբերի 13-ին Հոլանդիայի Ամստերդամ քաղաքում Ոսկան վարդապետ Երեւանցու ջանքերով լոյս է տեսնում հայութեան հոգեւոր-մշակութային կեանքում երկար սպասուած Աստուածաշունչ կոչուող մատեանը: Այս գրքի լոյս ընծայումով հրատարակիչ Ոսկան Երեւանցին նպատակ ունէր իրականացնելու ոչ միայն կաթողիկոս Յակոբ Ջուղայեցու յանձնարարութիւնը, այլեւ ակնկալում էր վաճառքի միջոցով թեթեւացնել տպարանի վրայ ծանրացած պարտքերի բեռը:

Ցայտնի է նաեւ, որ բարելաւման փոխարէն տեղի է ունենում հակառակը: Վաճառքի նպատակով Հայաստան ուղարկուած Աստուածաշնչի կապոցները Միջերկրականի ջրերում տեղի ունեցած նաւաբեկման հետեւանքով ջրասոյզ են լինում. անհետեւանք են մնում կաթողիկոսի կողմից խոստացած գումարների առաքումը: Լվովում ձախողման է ենթարկւում Աստուածաշունչ ու Շարակնոց գրքերի վաճառքը: Հետեւանքը լինում է այն, որ Ոսկան Երեւանցին, չկարողանալով ժամանակին վճարել տոկոսով փոխ առնուած գումարները, ենթարկւում է պարտատէրերի ճնշմանը, ապա եւ հալածանքին:

Դրութիւնը շտկելու՝ պարտատէրերի ոտնձգութիւնները դէթ ժամանակաւորապէս կանխելու նպատակով Ոսկան Երեւանցին դիմում է մի շարք գործնական քայլերի: Նախ՝ տպարանի շարժական կայքը ենթարկում է մասնատման: Մի մասի համար ներքին պայմանաւորուածութեամբ սեփականատէր է դարձնում տպարանի գրաշար կարապետ Անդրիանացուն: Տպարանը Բումպուրթ փողոցից տեղափոխում է կայզերշտատ եւ այլն: Ամստերդամը Ոսկան Երեւանցու համար թէեւ ունէր որոշակի առաւելութիւն՝ համեմատաբար զերծ էր Հռոմի գրաքննչական միջամտութիւնից, այսուհանդերձ այդ քաղաքը ունէր այն թերութիւնը, որ հեռու էր Հայաստան աշխարհից, եւ զգալապէս մեծ էին բեռները Հոլանդիայից արեւելք տեղափոխման հետ կապուած ծախսերը, ինչը այս դէպքում Ոսկան Երեւանցու համար ունէր վճռորոշ նշանակութիւն: Ուստի այս հանգամանքների ճնշման տակ Ոսկան Երեւանցին ստիպուած է լինում կանգնել Ամստերդամը լքելու փաստի առաջ: Մի շարք նկատառումներից ելնելով՝ նա որոշում է տպարանը տեղափոխել Վենետիկ կամ Ճենովա: Այդ պարագայում նա պէտք է ունենար համապատասխան թոյլտուութիւն...

1668 թ. հոկտեմբերի 29-ին նա մի նամակով դիմում է Հռոմի Հաւատի տարածման ժողովին: Տեղեակ պահելով տպարանը Վենետիկ կամ Ճենովա տեղափոխելու մտադրութեան մասին՝ նա խնդրում է իրեն տալ համապատասխան թոյլտուութիւն: Միաժամանակ Ոսկանը նպատակ ունէր Աստուածաշնչի մնացած քանակութիւնը վաճառքի հանել կաթողիկէ դաւանանքին յարող հայութեան միջավայրում: Ենթադրուող խոչընդոտները հարթելու նպատակով նա ոչ միայն նամակով դիմում է, այլեւ իր հրատարակած Աստուածաշնչից մէկական օրինակ, համապատասխան մակագրութեամբ, նուէր է ուղարկում Հռոմի քահանայապետ Կղեմէս Թ պապին եւ Հաւատի տարածման ժողովին:

Մինչեւ Հռոմից կստացուէր առաքուած նամակների պատասխանը, 1668

թ. վերջերին Ոսկան Երեւանցուն յայտնի են դառնում Ֆրանսիական կառավարութեան քաղաքականութեան մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները, հարաւային ծովեզերեայ քաղաքներում կիրառուող ստատուսի վերաբերեալ: Ըստ նոր հրամանագրի՝ վերացւում են նախկինում կիրառուող սահմանափակումները, եւ Մարսէլը յայտարարւում է բաց նաւահանգիստ: Վերացւում են Մարսել մտնող եւ այնտեղից դուրս մեկնող նաւերից գանձուող հարկերը: Արտօնութիւններ են տրւում վաճառականներին, խրախուսւում է հայկական գրատպութիւնը եւ այլն:

Տեղեկանալով այս շրջադարձի մասին՝ Ոսկան Երեւանցին փոխում է իր մտադրութիւնը եւ որոշում է յաջողութեան դէպքում տպարանի տեղափոխումն իրականացնել Ֆրանսիայի հարաւում, ծովեզերեայ քաղաքներից մէկում:

Մտայղացման այս նոր տարբերակը Ոսկան Երեւանցու համար ունէր աչքի ընկնող առաւելութիւններ: Նախ՝ կարող էր օգտուել կիրառուող արտօնութիւններից, եւ ապա՝ Ֆրանսիայի հարաւը ճեռնրից, եւ ապա՝ Ֆրանսիայի հարաւը ճեռնարկ էր Հայաստանին մօտիկ լինելու առումով:

Փոխելով մտադրութիւնը՝ Ոսկան Երեւանցին նախապատրաստական աշխատանքներ է տանում Ֆրանսիայի գահատանքներ է տանում Ֆրանսիայի գահակալ Լիւդովիկոս 14-րդ թագաւորի հետ իր հանդիպումն իրականացնելու համար: Ոսկանը որոշում է իր աղերսագրի հետ մէկտեղ «Արեւ արքային» նուիրաբերել նաեւ իր հրատարակած Աստուածաշունչը... Ուստի 1669 թ. 21-ը մայիսի ժամակացոյցով նա գրում է Լիւդովիկոս 14-րդի մեծութեանը վայել մի ուղերձ, թարգմանել է տալիս լատիներէն եւ գրքի կազմարարին յանձնարարում է ուղերձի տպածոն գետեղել ընդգծուած հեղուեստ նախապատրաստուող Աստուածաշնչի սկզբում: Նոյն թուականի 26-ը մայիսի ժամանակացոյցով գրում է «ամենաքրիստոնեայ» թագաւորին ուղղուած մի աղերսագիր Ամստերդամի տպարանը Ֆրանսիա փոխադրելու վերաբերեալ:

Լիւդովիկոս 14-րդի եւ Ոսկան Երեւանցու փոխյարաբերութեանը անդրադարձող մեր պատմաբաններն ու բանասէրները, ձեռքի տակ չունենալով այդ երկու վաւերագրերի բնօրինակները, աղերսագրին վերաբերող բովանդակութիւնը ներ են առել ուղերձի պարունակութեան մէջ: Այժմ, երբ մեր տրամադրութեան տակ կայ ուղերձի թարգմանութիւնը, այդ միաճուլումը դառնում է աւելի քան չհիմնաւորուած:

Մինչ Ոսկան Երեւանցին նախապատրաստւում էր Փարիզ մեկնել իր աղերսագիրը Լիւդովիկոսին յանձնելու համար, Հռոմի Հաւատի տարածման ժողովում քննարկում են Ոսկան Երեւանցու գրած նամակը՝ հաւանութիւն տալով նրա կողմից տպարանը Իտալիայի տարածք տեղափոխելու մտադրութեանը, խոստանում են ցուցաբերել համապատասխան օգնութիւն տպարանը Լիւոնս տեղափոխելու դէպքում:

Ոսկան Երեւանցին նախքան կը կարողանար որոշել իր անելիքները, Ֆրանսիական արքունիքից տեղեկութիւն է ստացւում Լիւդովիկոս 14-րդի հետ նրան տրուելիք հանդիպման հնարաւորութեան մասին:

Ոսկան Երեւանցին, 1669 թ. յունիսի կէսերին իր հետ առնելով Աստուածաշնչի նուիրաբերուող օրինակը, Ամստերդամից մեկնում է Փարիզ: Վերջինս արժանանում է ընդունելութեան եւ Ֆրանսիայի գահակալ «Արեւ արքային» է ներկայացնում իր գրած աղերսագիրը, տպարանը Ամստերդամից Ֆրանսիայի հարաւ տեղափոխելու վերաբերեալ:

© National Library of Armenia

Ինչպէս ցոյց են տալիս բանասիրութեան մէջ անուղղակի աղբիւրներից քաղուած տեղեկութիւնները, Ոսկան Երեւանցին ընդունելութեան արդիւնքից եղել է գոհ: Թագաւորը, ընդառաջելով նրան, իրաւունք է տալիս տպարանը Ամստերդամից «Մարսել, Լիոն կամ Ֆրանսիական տէրութեան մի այլ քաղաք տեղափոխելու»: Այս ամէնով հանդերձ նա Ոսկանի առաջ դնում է մի նախապայման, ըստ որի «Հրատարակելիք գրքերը,– ասուած է արտօնագրի մէջ,– ուղղափառ հռոմէական կրօնի վարդապետութեան եւ հաւատին հակառակ բան չպէտք է պարունակեն»:

Գոհունակութիւնից բացի, Ոսկան Երեւանցին ունէր նաեւ որոշ անբաւականութիւն յայտնելու հիմքեր, սակայն, այդ մասին ուղղակի փաստեր չունենալով, պէտք է դիմենք տրամաբանութեան օգնութեանը: Ստանալով գոհացուցիչ խոստումներ՝ Ոսկան Երեւանցին պէտք է առորոշ ժամանակով սպասէր, որպէսզի նրան տրուէր արքայական արտօնագիրը: Լիւոնոյում անորոշութեան մէջ թողնուած եւ լուծում պահանջող հարցերը նրան հանգիստ չեն տալիս անորոշ ժամանակով մնալու Փարիզում, ուստի նա առանց ձեռքում ունենալու բաղձալի արտօնագիրը 1669 թ. նոյեմբերի 1-ին Փարիզից մեկնում է Լիւոնոն:

1670 թ. մարտի սկզբին Ֆրանսիայից Ոսկան Երեւանցուն տեղեակ են պահում իրեն տրուելիք արտօնագիրը պատրաստ լինելու մասին: Վերջինս առանց յապաղելու մեկնում է Փարիզ: Արքունի յանձնակատար Ռիշար Սիմոնից ստանալով արքունի հրամանագիրը՝ նա 1670 թ. ապրիլի սկզբին մեկնում է Մարսել եւ շուրջ երկու, երկուսուկէս ամիս մնում է այնտեղ: Թէ այդ ընթացքում նա Մարսելում ինչով է եղել զբաղուած, բանասիրութեանը մինչեւ այժմ ոչինչ յայտնի չէ:

1989 թ. Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ, հետագայում՝ 1996 թ. աբբահայր, Սահակ վրդ. Ճեմճեմեանի Ս. Ղազարում հրատարակած «Հայ տպագրութիւնը եւ Հռոմը» վերնագրով, իր տեսակի մէջ շատ արժէքաւոր աշխատութեան մէջ, զգալի տեղ է յատկացրել խնդրոյ առարկայ թեմային: «Աւինիոնի փոխնուիրակը,– գրում է նա,– Հռոմի Հաւատի տարածման ժողովի քարտուղարին իր 1671 թ. 4-ը մարտի թուակիր նամակում գրում է. «Ձեր 10-ը յունուարի նամակով պատուէր տուած էիք ինձի քննել, թէ արդեօ՞ք Մարսելիա բացուած է հայկական գիրքեր կաթողիկոսին պատուիրակի կողմէ... Ցետամուտ եղայ,– շարունակում է նամակի հեղինակը,– բայց հետքը չգտայ, անշուշտ որովհետեւ ծածուկ կը տպեն»»: Ցարանման տեղեկութիւններ բանասիրութեան մէջ յայտնուել են նաեւ այլ աղբիւրներում, սակայն, քանի որ ձեռքի տակ ունեցել են մարսելեան տպարանի հիմնաւորման մասին ամրագրուած տեսակէտ, ըստ որի այդ տպարանը հիմնադրուել է 1673-ի յունիս-յուլիս ամիսների ընթացքում, հասկանալի պատճառով այդ տեղեկութիւնները մատնուել են անուշադրութեան:

Քանի որ տպարանի գոյութիւնը հիմնաւորուում է ոչ թէ յայտարարութիւնների միջոցով, այլ լոյս ընծայուած գրքերի վաւերականով, եւ քանի որ այդ տպարանը չի տուել նման փաստարկի համար իրեղէն ապացոյց, ուստի այդ կարգի մոտեցման հանդէպ ցուցաբերուած անտարբերութիւնը, ըստ էութեան, պէտք է համարել տրամաբանական:

Ըստ բանասիրութեան մէջ գրանցուած տուեալների՝ Մարսելում լոյս տեսած առաջին գիրք համարուել է Գրիգոր Նարեկացու «Մատեանի» թերաւարտ

հրատարակութիւնը, որի տպագրութիւնն իրականացուել է 1673 թ. մայիս-յունիս ամիսների ընթացքում:

1989 թ. Մեսրոպեանի անուան գրադարանի նախաձեռնութեամբ երեւանում լոյս է տեսնում «Հայ գիրքը 1512-1800 թթ.» խորագրով արժէքաւոր աշխատութիւնը: Այս գրքի 63-րդ էջում 1672 թ. տակ գրառնուած է Մարսելում Ոսկան Երեւանցու հրատարակած «Գիրք սաղմոսաց Դաւթի» վերնագրով 448 էջանոց մի գիրք, որի անուանաթերթային գրառումը ունի հետեւեալ շարադասութիւնը. «Տպեալի տպարանի սրբոյ Էջմիածնի եւ սրբոյն Սարգսի զօրավարի յամին Տեառն 1672 յուլիս ամսոյ ի քաղն եւ հինգ»: Այս գրառման փաստարկով ի յայտ է գալիս Մարսելում տպագրուած մի գիրք, որի գոյութիւնը մինչեւ վերոյիշեալ աշխատութեան տպագրութիւնը յայտնի չի եղել այդ թեմային անդրադարձողներից եւ ոչ մէկին: Աւելին՝ այս Սաղմոսի գոյութիւնը յայտնի չի եղել նաեւ Հաւատի տարածման ժողովի արխուն խուզարկուներին:

Այս գիրքը 1672 թ. տպագրուած լինելու վաւերականը, առանց լրացուցիչ փաստարկումների, բեկում է մտցնում այն հաւաստիացման մէջ, ըստ որի Ոսկան Երեւանցին տպարանը Մարսել է տեղափոխել 1673 թ.:

Սա դեռ բոլորը չէ...

Ոսկան Երեւանցու նախորդ շրջանում հրատարակած գրքերի վրայ կատարուած հաշուարկը ցոյց է տալիս, որ 448 էջանոց գրքի շարուածքն ու տպագրութիւնը գաղտնիութեան պայմաններում ոչ վարժ գործաւորների աշխատակցութեամբ լաւագոյն դէպքում կարող էր իրականացուել առնուազն 13-14 ամսուայ ընթացքում:

Եթէ այս թնջուկը պարզաբանելու նպատակով դիմենք թուաբանութեան օգնութեանը, ապա կարող ենք ասել, որ Ոսկան Երեւանցու կողմից Մարսելում հիմնադրած տպարանը սկսել է գործել «Սաղմոսի» տպագրութեան աւարտից շուրջ մէկ տարի մէկ-երկու ամիս առաջ: Սա բանասիրութեան մէջ կիրառուող այն փաստարկումներից է, որտեղ վաւերագրի բացակայութեան դէպքում հաւաստիացումը կատարուում է տրամաբանութեան միջոցով:

Երբ հիմնաւորուած ենք համարում, որ Մարսելում «Սաղմոսի» հրատարակութիւնը սկզբնաւորուել է գրքի շարուածքից 13-14 ամիս առաջ, ապա, դարձեալ դիմելով թուաբանութեան օգնութեանը, կարող ենք ասել, որ այդ տպարանի հիմնադրումը տեղի է ունեցել 1670 թ. կէսերին:

Իրրեւ լրացում՝ հարկ ենք համարում աւելացնել, որ Հռոմի Հաւատի տարածման ժողովի նուիրակների գրի առած տեղեկութիւնները տպարանի ծածուկ գործունէութեան մասին ստանում են ոչ միայն հաւաստութեան երանգաւորում, այլեւ փաստական է դառնում, որ նրանց անհանգստութիւնը եւ նման միջոցների դիմելը ունեցել է տրամաբանական հիմնաւորում: Ցստակ է դառնում, որ Մարսելի տպարանի գործունէութիւնը սկզբնաւորման օրից մինչեւ Ոսկան Երեւանցու Մարսել գալը եւ նոյնիսկ մինչեւ Նարեկացու գրքի մի քանի մամուլների լոյս ընծայումը տպարանն ունեցել է գաղտնի գործունէութեան շրջան, որի պատճառով էլ այդ հաստատութեան գոյութիւնը անյայտ է մնացել ոչ միայն բանասիրութեան, այլեւ Հռոմի Հաւատի տարածման ժողովի նուիրակներին: Այս իրողութեան պատճառներից մէկն էլ այն է, որ Ոսկան Երեւանցին Լիւդովիկոս 14-րդի կողմից տրուած արտօնագրի փաստաթղթային ձեւակերպում տեղական իշ-

© National Library of Armenia

խանութիւնների մօտ գիտակցաբար մինչեւ 1673-ի առաջին կէսը չէր իրականացրել: Ուստի այս յապաղումը առանց պատճառի չի եղել: Ոսկան Երեւանցին չի ցանկացել տպարանի գործունէութիւնը պաշտօնականացնել. նա խորապէս գիտակցել է, որ այդ պարագայում չի կարող Ամենայն Հայոց կաթողիկոս Ցակոբ Ջուղայեցու կողմից յանձնարարուած գրքերի տպագրութիւնը իրականացնել: Նման փաստերը յայտնի դառնալու դէպքում կարող էին հանդիպել դիմադրութեան եւ արգելք յարուցող գլխացաւանքի Հաւատի տարածման ժողովի նուիրակների կողմից:

Ոսկան Երեւանցու շուրջը 1669-1673 թթ. ընթացքում ծաւալուող դէպքերի զարգացման վերլուծութիւնը հիմք է տալիս, իբրեւ վարկած, ասելու, որ 1670 թ. մայիսին երբ Ոսկան Երեւանցին Փարիզում Լիւդովիկոս 14-րդի տուած արտօնագիրը ստանալուց յետոյ մեկնում է Մարսել, գաղտնիութեան պայմաններում նա այնտեղ զբաղուել է տպարանի հիմնադրման աշխատանքով:

Հետեւութիւնը այն է, որ մարսելեան տպարանը հիմնադրուել է ոչ թէ 1672 կամ 1673 թ. կէսերին, ինչպէս ընդունուած է եղել բանասիրութեան մէջ, այլ 1670 թ. առաջին կէսին՝ մայիս-յունիս ամիսների ընթացքում:

***

Մարսելեան տպարանի հիմնադրումը պարզելուց յետոյ մեծ կարեւորութիւն է ներկայացնում այն, թէ նման մաքառումներից յետոյ այդ տպարանը ինչ աւանդ է ներդրել մեր մշակութային կեանքի պատմութեան մէջ: Այդ խնդրի պարզաբանումն ու արժէքաւորումը իրօք որ ամէնից կարեւորն է, այս դէպքում, սակայն, դա մի աւելի ծաւալուն ուսումնասիրութեան առարկայ է, որին կարելի է անդրադառնալ մի այլ առիթով:

«ԽՈՐԱՆ» ԳՈՐԳԻ ՄԻ ՆՄՈՒՇԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ
«ԽՈՐԱՆ» ԳՈՐԳԻ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԼԻԼԻԱ ԱՒԱՆԷՍԵԱՆ

Ականաւոր գիտնական, մտաւորական Լեւոն Զոհրապեանի գողտրիկ բնակարանում, որտեղ տիրող են գիրքն ու գիտութիւնը, տեսանք ժամանակի դրոշմը կրող գործուածքներ՝ կարպետ, գորգ, խուրջին, անկողնապարկ: Գործողը պրն. Զոհրապեանի տատն է՝ օճնեցի յայտնի գորգագործ Անաստասիա Խարազեանը: Մեր տեսածը փոքրագոյն մասն է կազմում նրա գործերի, որոնցից մի քանիսն են հասել մեզ:

Սակայն մեր ուշադրութիւնը կենտրոնացաւ այս տանը իր ուրոյն տեղն ունեցող գործի վրայ:

Խօսքը «Խորան» գորգի մասին է (նկ. 1), որի խորհրդաւոր պատկերները, գոյների ներդաշնակութիւնը առանձնայատուկ գեղեցկութիւն են հաղորդում նրան:

Ցաւօք չգիտենք, եղե՞լ է այս նմուշի նախատիպ օրինակը եւ, եթէ կայ, որտե՞ղ է դա: Գորգը կարող է եզակի օրինակ լինել եւ գործուէր ցուցահանդէսի համար:

«Խորան» հայկական գորգը Անաստասիա Խարազեանը գործել է 1910-1912 թթ. Օճունում: Նոյն՝ 1912 թ. այն մասնակցել եւ մրցանակ է շահել Սանկտ-Պետերբուրգում կայացած ցուցահանդէսին: Գործողի հարսը՝ տիկ. Սեդա Միրզոյեանը, պատմում է, որ շահած մրցանակի վկայականը մինչեւ վերջերս Օճունում էր:

«Խորան» հայկական գորգի նմուշները յայտնի են դեռ միջնադարում, եւ դրանց ամենահին եւ գեղեցիկ օրինակները գետեղուած են Ծոլքմար Գանցհորնի յայտնի «Oriental teppich» մեծածաւալ գիրք-ալբոմում (Volkmar Gantzhorn, 1990, S. 31, 480, 483): Բայց դրանց մէջ նմանատիպ օրինակի չենք հանդիպում:

Ուսումնասիրուող գորգի տուեալներն են՝

Ձեռքը, միջնաթելը, խաւը բրդից են. հանգոյցների թիւը՝ dm2=960, գործուած է հայկական հանգոյցով, չափը՝ 157x290 սմ. հիմնական գոյներն են կարմիրը, բաց կապոյտը, կանաչի երանգները, սպիտակը: Կարմիրը, կապոյտը, սպիտակը յայտնի են որպէս հին հայկական արուեստի բնորոշ գոյներ (Բ. Пиотровский, 1962, стр. 113): Կանաչով հիմնականում ներկուած են շրջագծուս դաշտը, ինչը յաճախ հանդիպում է Հայաստանի հիւսիս-արեւելեան շրջանների (Արցախ, Լոռի) գորգերի վրայ:

Այժմ փորձենք վերլուծել յօրինուածքի պատկերների խորհրդանիշերը:

Գորգի հիմնադաշտի վրայ պատկերուած է սիւնազարդ խորանը: Սիւներն ունեն «կորնթոսեան» խոյակներ, իսկ հիմքում՝ ողկոյզի պատկերներ: Խորանի կենտրոնում «կենաց» ծառն է՝ պտուղներով եւ ծաղիկներով: Չիմքում «սրբազան» աւազանն է՝ երկու զոյգ պատկերով: Վերեւում լոյսի խորհրդանիշ մոմերով չահն է: «Կենաց» ծառի ալ եւ ճախ կողմերում «սրբազան» նոճիներն են: Վերից վար իջնում են ոլորապտոյտ ճիւղեր:

Ողնաձեւ կամարի գագաթին նռան պտուղի մեծ պատկեր է: Կամարի վերնամասը յարդարուած է ծաղկեճիւղերով: Գորգն ունի «գլխազարդ» գօտի, որտեղ պատկերուած են եօթ խորաններ՝ «կենաց» ծառի խորհուրդը կրող գունագեղ ծաղկեճիւղերով (նկ. 2):

© National Library of Armenia